

**ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԵՇՈՒԸԸ ԽԹԱՆՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ  
ԴԱՀՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

ՀՀ օրենսդրական դաշտի վերլուծությունը նորարարական տնտեսության ձևավորման պայմաններում չի կարող դիտվել միայն պետության նորարարական գործունեությունը կարգավորող օրենքներով և այլ բնույթի իրավական ակտերով։ Այստեղ հարկ է անդրադառնալ նաև միշտ այլ օրենսդրական ոլորտների, որոնց համալիր վերլուծությունը միայն կրացահայտի ՀՀ օրենսդրական դաշտի դրական և բացասական կողմերը նորարարական տնտեսության անցման պայմաններում։

Նախ սկսենք 1994թ. հուլիսի 31-ին ընդունված օտարերկրյա ներդրումների մասին ՀՀ օրենքից, որը նշակվել է՝ ելնելով հետևյալ պայմաններից։

1. ներդրողների համար ստեղծել բարենպաստ միջավայր տնտեսության բոլոր ոլորտներում ապահովելով կայուն և կանխատեսելի պայմաններ քիզնես գործարքների և ներդրումների պատշաճ իրավական պաշտպանության համար,

2. նվազեցնել օտարերկրյա և տեղական ներդրումների հոսքերի ռիսկերը՝ վերացնելով հարկային, ինչպես նաև մյուս կարգավորող և վարչական խոչընդոտները,

3. ներգրավել անդրագգային կորպորացիաները (ԱԱԿ)՝ գլոբալիզացվող համաշխայիհային տնտեսության մեջ Հայաստանի դերը մեծացնելու նպատակով,

4. առավել արդյունավետ կերպով (յուրաքանչյուր դեպքի համար առանձին) ավարտին հասցնել մասնավորեցման գործընթացը՝ հաջողակ ներդրողներ ներգրավելու միջոցով,

5. հետագա տարիների ընթացքում արտահանման բարձր ցուցանիշներ պահպանելու նպատակով Հայաստանի կառավարությունը ջանքեր կգործադրի դիվերսիֆիկացնելու արտահանման կառուցվածքը, քանի որ ներկա կառուցվածքը սահմանափակվում է մի քանի ապրանքային խմբերով։ Արտահանման բարձր ցուցանիշների հասնելու և դրանք պահպանելու համար անհրաժեշտ է բացահայտել և զարգացնել նորարար կլաստերները, ինչպիսիք են՝ գիտահետազոտական կլաստերները և կրթական ծառայությունների առևտրականացումը՝ արտահանմանն ուղղված ներդրումների, մասնավորապես ԱԱԿ-ների ներգրավման միջոցով։

Կարևորելով «Օտարերկրյա ներդրումների մասին օրենքի» դերը տնտեսական զարգացման գործընթացում օտարերկրյա կապիտալի ներգրավման համար՝ կառավարությունը շեշտադրել է ՕՈՒՆ-ների վճռորոշ դերը տնտեսական աճն արագացնելու մեջ և ՕՈՒՆ-ների առավելությունների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը Հայաստանի տնտեսության համար։ Նույնիսկ սահմանվել են ներդրման համար շահավետ այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝

- բարձր տեխնոլոգիաների էլեկտրոնիկայի նախագծում,
- հանքարդյունաբերություն և մետալուրգիա,
- էլեկտրաէներգիայի համակարգեր,
- քիմիական արտադրություն,
- թերև արդյունաբերություն,
- բանկային ծառայություններ,
- համակարգչային ծրագրային ապահովման մշակում,
- սննդի արտադրություն և փաթեթավորում,

- զբոսաշրջություն<sup>1</sup>:

Իհարկե, նման օրենքի գոյությունը, լինելով բավականին ազատական, նպաստավոր միջավայր է ստեղծել ՕՈՒՆ-ների ներգրավման հարցում, սակայն դրանց ծավալները են են մնում անցումային տնտեսությամբ մյուս երկրների ցուցանիշներից: Այսինքն՝ այստեղից կարելի է հետևություն անել, որ հիմնախնդիրն օրենքի շրջանակներից դուրս է:

Եվ միգուցե այդ բացը լրացնելու պատճառով ՀՀ կառավարության՝ 2005թ. ապրիլի 21-ի թիվ 15 նիստի արձանագրային որոշմամբ հաստատվել է «ՀՀ ներդրումային քաղաքականության» հայեցակարգը, որը մշակել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացրել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը: Հայեցակարգի հիմնական նպատակն է բարձրացնել ՀՀ ներդրումային քաղաքականության քափանցիկությունը, ամրագրել վերջինիս հիմնական սկզբունքները և ուղղությունները:

Ամփոփելով ներդրումային քաղաքականության պետական աջակցության իրավական կողմը՝ կարող ենք փաստել, որ իրավական առումով ՕՈՒՆ-ների հիմքի վրա նորարարական ձեռնարկությունների ստեղծումը ՀՀ-ում չի հանդիպի ոչ մի արգելքի:

Վերը նշվածը լրացնող և միևնույն ժամանակ օգնող հանգամանք են մտավոր սեփականության պաշտպանության մասին օրենքները, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների պետական աջակցության մասին կառավարության կողմից հաստատվող տարեկան ծրագրերը, որոնցում առանձին կետով կարևորվում է ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը: Վերջինս իրականացվում է Ծրագրի շրջանակներում առանձին կամ խմբավորված ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների ու ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, գիտական մշակումների իրականացման և կիրառման հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ՝ առաջարկելով ժամանակակից բարձրորակ տեղեկատվություն և խորիրդատվություն՝ ուղղված դրանց տեխնոլոգիական զարգացմանը, արտադրանքի որակի բարելավմանը, նորարարությունների կիրառմանն ու ժամանակակից տեխնոլոգիաների առևտրայնացմանը, ինչպես նաև տրամադրելով արտադրանքի իրացման շուկաների ուսումնասիրություններ իրականացնելու լայն հնարավորություններ:

Խիստ կարևոր հանգամանք է նաև պետության վերաբերմունքը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին: Մասնավորապես այդ առումով 2000թ. դեկտեմբերի 28-ի N58 որոշմամբ տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերությունը ճանաչվեց ՀՀ տնտեսության զարգացման գերակա ճյուղ: Վերջինիս հիման վրա էլ մշակվեց ՀՀ տեղեկատվական արդյունաբերության զարգացման հայեցակարգը, որտեղ առաջարկվում էր ներդնել տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսության բոլոր ոլորտներում, ապահովել համապատասխան մասնագետների վերապատրաստում, տեխնոպարկերի և ինկուբատորների ստեղծում, այդ ամենից բխող էլեկտրոնային առևտրի և էլեկտրոնային փաստաթղթերի մասին օրենսդրական փաթեթների ընդունում: Մակայն առաջին հայացքից բավականին հուսադրող այս իրավական փաթեթները խթանող ազդեցություն չունեցան տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման վրա: Մասնավորապես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը կազմում է ՀՆԱ-ի 1.3%-ը, ինչը բավականին փոքր է Հարավային Կովկասի երկրների ցուցանիշից:

Այժմ անդրադառնանք բուն նորարարական գործունեության իրավական ասպեկտների վերլուծությանը: Եվ այսպես, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2005թ. հունվարի 20-ի N2 նիստի արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել ՀՀ-ում նորարարական գործունեության հայեցակարգին, որտեղ ամրագրված են գիտելիքի վրա հիմնված տնտեսության ձևավորման սկզբունքներն ու մոտեցումները: Այդ սկզբունքների հիման վրա

<sup>1</sup> Հայեցակարգ «Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության», ՀՀ կառավարություն, 2005թ. ապրիլի 21, N15 նիստի արձանագրային որոշում:

մշակվել է «2005–2010 թՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀԱՍՏԱԿԵՐՎԱԿԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ» մասին, որտեղ ներկայացված են 2005-2010 թվականներին իրականացվելիք միջոցառումները և դրանց ֆինանսավորման հնարավոր աղբյուրները, որի շրջանակներում էլ ընդունվել են կամ պետք է ընդունվեն ծրագրեր կամ օրենսդրական փաստաթղթեր (տես՝ աղյուսակ): Ինչպես երևում է աղյուսակից, ԱՊՀ անդամ երկրներից մի փոքր ավելի զարգացած գիտատեխնիկական պոտենցիալ ունեցող պետությունները դեռ 10 տարի առաջ են սկսել ձևավորել ազգային նորարարական համակարգ, այն դեպքում, երբ Հայաստանը դրա մասին սկսել է մտածել միայն 2005թ.-ից:

Ծրագրի հիմնական նպատակը երկրի տնտեսության տեխնոլոգիական մակարդակի հագեցվածության բարձրացմանը, ինովացիոն արդյունքի ներքին ու արտաքին շուկաներում մրցունակության և այդ հիմքի վրա կայուն տնտեսական զարգացման փուլին անցնելուն նպաստելն է:

Հայաստանի Հանրապետությունում նորարարական համակարգի ձևավորման և զարգացման ծրագրի սկզբնական (նախապատրաստական և կազմակերպական) փուլն ընդգրկում է 2005-2008 թվականները և ներառում այն միջոցառումները, որոնք ուղղված են համակարգի իրավական և կառուցվածքային հիմքերի ստեղծմանը: Ծրագրի իրականացման հաջորդ փուլն ընդգրկում է 2009-2010 թվականները: Տվյալ էտապի կարևորագույն սկզբունքը նորարարական համակարգի տարրերի ինքնակազմակերպման ապահովումն է իրավական դաշտի լիարժեքության և շուկայական մեխանիզմների գործողության պայմաններում:

#### Աղյուսակ

#### Նորարարական գործունեության շրջանակներում ընդունված հիմնական փաստաթղթեր<sup>1</sup>

Հայաստան	Բեղործության մեջ մտնելու տարեթիվ	Ուկրաինա	Ղազախստան
1.ՀՀ օրենք «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» (2006թ.)	1.Գիտանորարարական գործունեության զարգացման ծրագիր (1996թ.)	1.Նախագահի կարգադրություն «Տեխնոպարկերի և այլ տեսակի նորարարական կառուցվածքների ստեղծման խնդիրների» մասին (1996թ.)	1.Նորարարական զարգացման ծրագրեր (2001թ.)
2.ՀՀ կառավարության որոշում «Ինովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին»	2.1998-2015թթ. ընթացքում արդյունաբերական համալիրի զարգացման ծրագիր (1998թ.)	2.Գիտատեխնիկական և նորարարական զարգացման հայեցակարգ (1999թ.)	2.Օրենք նորարարական գործունեության մասին (2002թ.)
3.ՀՀ կառավարության որոշում «Ինովացիոն նախագծերի ֆինանսավորման կարգը հաստատելու մասին»	3.Տնտեսության կառուցվածքային վերափոխման և մրցունակության բարձրացման ծրագիր 4.2001-2005թթ. գիտատեխնիկական գործունեությունը խրանող մի շաբթ բնապահպանական և սոցիալական ծրագրեր (2001թ.)	3.Օրենք նորարարական գործունեության մասին (2002թ.)	3.2003-2015թթ. արդյունաբերական նորարարական զարգացման ուղղմավարություն (2003թ.)
4.Վենչուրային հիմնադրամների գործունեության իրավական հիմքերի ստեղծում (2006-2007թթ.)	4.Օրենք նորարարական գործունեությունների գերակա ուղղությունների մասին (2003թ.)	4.Օրենք նորարարական գործունեությունների գերակա ուղղությունների մասին (2003թ.)	5.Նախագահի կարգադրությունը «Պետության անվտանգության և տնտեսության համար ուղղմավարական նշանակություն ունեցող ձեռնարկությունների նորարարական գործունեության ֆինանսական աջակցության» մասին
5.Նորարարական փաթեթների մշտապես գործող ցուցահանդեսի կազմակերպում և տեղեկատվական-վերլուծական կենտրոնի ստեղծում «Գիտատեխնիկական լրատվական հայկական կենտրոն» ՊՈԱԿ-ում (2005-2006թթ.)	5.2003-2007թթ. նորարարական քաղաքականության հայեցակարգ (2003թ.)		

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել է ըստ «2005 – 2010 թՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ՀՀ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀԱՍՏԱԿԵՐՎԱԿԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ» մասին ծրագրի և Վլասին Գ.Ա., Լենչուկ Ե.Բ. Промышленная политика в условиях перехода к инновационной экономике М. Наука 2006г., стр. 139 տվյալների:

Հայաստան	Բնողության	Ուկրաինա	Ղազախստան
<p>2006-2010թթ.)</p> <p>6. «Անդրոն ԳՀԻ» տեխնոպարկ «ՓԲԸ» գարգացման ծրագիր (2005-2010թթ.)</p> <p>7. Առաջավոր տեխնոլոգիաների զիտանորարարական կենտրոնի և նորարարական ենթակառուցվածքների միասնական տեղեկատվական ցանցի ստեղծում «Ա.Ի.Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ում (2006-2010թթ.)</p> <p>8. Տեխնոլոգիաների առևտրայնացման աջակցող կենտրոնի ստեղծում (2006-2010թթ.)</p> <p>9. Գիտության ու տեխնոլոգիաների ոլորտներում նորարարական մենեջմենթի կադրերի պատրաստման համալիր ծրագրի մշակում (2006-2007թթ.)</p> <p>10. Մտավոր սեփականուրյան պաշտպանության իրավական բազայի կատարելագործում, ստանդարտների և սերտիֆիկացման համակարգերի համապատասխանեցում համաշխարհային ստանդարտներին (2006-2010թթ.)</p>			

Առանձին վերլուծության կարիք ունի նման համակարգի ճևավորման ֆինանսական աղբյուրների ուսումնասիրությունը:

Նորարարական գործունեության ֆինանսավորման հիմնախնդիրը բավականին բարդություններ է իրենից ներկայացնում նախ և առաջ օրենսդրական տեսանկյունից, քանի դեռ չկա համապատասխան օրենսդրական փաթեթ, ըստ որի կհստակեցվի, թե բյուջեի որքան մասն է տրամադրվելու նորարարական գործունեությունը ֆինանսավորելու համար, չկա վեճչութային հիմնադրամների մասին օրենք և այլն:

«2005-2010 թՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՆՈՎԱՑԻՈՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ» մասին ծրագրի հաստատումից հետո հաջորդ քայլը եղավ 2006թ. մայիսի 23-ին ՀՀ Աժ-ի կողմից «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որտեղ արտացոլված էին վերը նշված ծրագրի հիմնական դրույթները:

Այնուհետև 2006թ. սեպտեմբերի 7-ին ՀՀ կառավարության՝ N152-Ս որոշմամբ նորարարական բնագավառում ՀՀ կառավարությունը պետական լիազոր մարմին ճանաչեց ՀՀ առևտի և տնտեսական զարգացման նախարարությանը: Իսկ նույն թվականի հոկտեմբերի 19-ին կառավարության N 1466-Ն որոշմամբ սահմանվել են նորարարական ոլորտի զարգացման հետևյալ գերակայությունները՝

- ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծումն ու զարգացումը,

- Էներգիայի այլընտրանքային աղբյուրները,
- բարձր տեխնոլոգիական մշակումները,
- էկոլոգիապես նախընտրելի տեխնոլոգիաների ներդրումն ու զարգացումը<sup>1</sup>:

Այժմ ամփոփելով ՀՀ նորարարական ոլորտում օրենսդրական դաշտի էվոլյուցիան՝ փորձներ համեմատական վերլուծություն անել ԿԱԵ և ԱՊՀ երկրների համապատասխան օրենսդրական գործընթացների միջև:

Յուրաքանչյուր երկիր նորարարական ոլորտում ունի իրեն բնորոշ օրենսդրական առանձնահատկությունները, սակայն ԿԱԵ և ԱՊՀ երկրները նորարարական զարգացման հիմնախնդիրը փորձում են լուծել գիտատեխնիկական խնդիրների լուծման կոնտեքստում: Բավականին տրամարանված օրենսդրական քայլերի հաջորդականություն է իրականացրել Հունգարիան: Նախ՝ օրենքով սահմանել է նորարարական գործընթացների ֆինանսավորման աղբյուրները և ինստիտուտները, այնուհետև՝ գիտատեխնոլոգիական և նորարարական հիմնադրամները, այսինքն՝ այն վայրերը, որտեղ պետք է հավաքվեն և մշակվեն նորարարությունները և 3-րդ քայլով մշակել է տնտեսության մրցունակության բարձրացման ծրագիրը: Այսինքն՝ ձևավորելով ֆինանսական միջոցներ, ունենալով արդեն պատրաստի նորարարություններ՝ Հունգարիայի կառավարությունը դրանք ուղղորդում է իր խակ կողմից գերակա ճանաչված ոլորտներ: Խոսքը վերաբերում է նրան, որ նորարարական ոլորտին վերաբերող, ՀՀ կառավարության և ԱԺ-ի կողմից մշակված և մշակվելիք օրենքների մեջ պատճառահետևանքային կապի բացակայություն կա, իսկ այն դեպքերում, եթե այդ կապը կարծես նշմարելի է, ապա թույլ է արտահայտված:

Մեկ այլ դիտարկում ևս ԿԱԵ և ԱՊՀ երկրների օրենսդրական դաշտում կան օրենքներ, որոնք հստակ կողմնորոշում են տվյալ երկրների նորարարական գործունեության ուղղությունը: Սասնավորապես իրականացվում են Լեհաստանում՝ ձեռնարկությունների մրցունակության բարձրացմանն ուղղված գործողությունների ճյուղային ծրագիր, Ալովենիայում՝ ձեռնարկությունների մրցունակության բարձրացմանն ուղղված գործողությունների ծրագիր նոր տեխնոլոգիաների զարգացման նպատակով, Ալովակիայում՝ կրթական և գիտական ոլորտների բարեփոխման ծրագրեր, Բելոռուսիայում՝ տնտեսության կառուցվածքային վերափոխման և մրցունակության բարձրացման ծրագրեր: Նման մի առանձնահատկություն ՀՀ օրենսդրական դաշտը չունի:

Այսպիսով, ելնելով վերը ասվածից՝ կարող ենք ասել, որ նորարարական գործունեության աջակցմանն ուղղված ՀՀ օրենսդրական դաշտը իրավական առումով բավականին լավն է, եթե վերլուծությունը կատարում ենք առանձին-առանձին օրենքների շրջանակներում, օրենքների համատեղման դեպքում առաջ են գալիս հետևյալ հիմնախնդիրները՝ օրենքի և իրականության միջև առկա անհամաձայնություն, թերի են նշված նպատակների իրականացմանը միտված հստակ սահմանված գործողությունները, ինչը օրենքին կամ իրավական այլ փաստաթղթերին տալիս է դեկլարատիվ բնույթ, հստակ չեն երևում օրենսդրական քայլերի արդյունքում կազմակերպչական փոփոխությունները: Վերը նշված հիմնախնդիրների պատճառը, կարծում ենք, ՀՀ նորարարական տնտեսության ձևավորման մողելի ոչ հստակ ներկայացման մեջ է:

<sup>1</sup> ՀՀ կառավարության որոշում «Ինվացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին», 2006թ., հոկտեմբերի 16, N1466-Ն: